ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -237-2023

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«10» «05» 2023 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Շ. Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի 214-Ն որոշումը՝ որոշման «1168. Արվեստների ծրագրի» «11013. Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանական միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Կաննի միջազգային կինոփառատոնին և կինոշուկային մասնակցություն» ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Կայմանագրի պայմանների դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և

իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 15675.8 հազար (տասնհինգ միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. մայիսի 28-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, Հավելված N 2-ի 4-րդ կետով և 5.6-րդ ենթակետով նախատեսված ծախսերի գործողության ժամկետը տարածվում են 2023 թվականի մարտի 29-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Տերյան 3ա
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018001744
Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01203271
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պաշտոնակատար՝
Հ. Հակոբյան	Շ. Միրզախանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 10 » «05» 2023 թ.
N ՄՇԴ-237-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Կաննի միջազգային կինոփառատոնին և կինոշուկային մասնակցության

1	Կազմակերպության անվանում	Հայաստանի ազգային կինոկենտրոն
2	Կազմակերպության գտնվելու վայր	Հայաստան, ք.Երևան, Տերյան 3ա
3	Ծրագրի անվանում	Կաննի միջազգային կինոփառատոնին և կինոշուկային մասնակցություն
3.1	Բովանդակություն	Ամեն տարի մայիսին Ֆրանսիայի Կանն քաղաքում անցկացվում է Կաննի միջազգային կինոփառատոնը և կից գործող Marche du Film կինոշուկան: Փառատոնը այս տարի կկայանա 2023 թ. մայիսի 16-ից 27-ը: Կաննի կինոփառատոնը և կինոշուկան աշխարհում հայտնի են որպես տեսաձայնային արվեստի խթանման ամենահեղինակավոր հարթակներից մեկը, որին մասնակցում են կինոյի ոլորտում գործող հազարավոր կազմակերպություններ՝ հիմնադրամներ, փառատոներ, վաճառքի գործակալներ, արտադրողներ և ոլորտի այլ ներկայացուցիչներ: Կինոշուկան մեծ հնարավորություն է ստեղծում գտնել միջազգային գործընկերներ, միջազգային ասպարեզում ներկայացնել հայկական դասական և ժամանակակից ֆիլմերը, ֆինանսավորման աղբյուրներ որոնել նոր նախագծերի համարտադրությունների և դասական ֆիլմերի վերականգնման համար: 2023թ. լրանում է հայ կինոյի հարյուրամյակը, և Հայաստանի ազգային կինոկենտրոնը նախատեսում է հայ կինոյի հարյուրամյակին նվիրված միջազգային միջոցառումների շարքը շարունակել կինոոլորտում ամենահեղինակավոր՝ Կաննի հարթակում: Հայ կինոյի հարյուրամյակի կապակցությամբ Կաննի միջազգային կինոփառատոնի Կանն Կլասիկս բաժնին ներկայացվել է Ֆ.Դովլաթյանի «Բարև, ես եմ» (1965թ.), ներկա պահին ընթանում են ֆիլմի թվայնացման և վերականգնման աշխատանքները: Հաշվի առնելով, որ 2023թ. հայ կինոյի հարյուրամյա հոբելյանն է, առավել կարևորվում է Եվրոպական կինոփառատոներին և կինոշուկաներին, մասնավորապես Կաննի միջազգային կինոփառատոնին և կից գործող Marche du Film կինոշուկային Հայաստանի ազգային կինոկենտրոնի մասնակցությունը, ինչը կնպաստի հայ դասական և ժամանակակից ֆիլմերի հանրահռչակմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի տեսանելիության ապահովմանը, ինչպես նաև Կինոկենտրոնի միջազգային գործունեության ու ձեռք բերված կապերի ամրապնդմանը: Կինոշուկային մասնակցության համար նախատեսվում է վարձակալել << տաղավար՝ պահպանելով մասնակցության բոլոր անհրաժեշտ չափանիշները. • Հայկական պատվիրակության գործունեության կենտրոնը

		լինելու է հայկական տաղավարը (9մ²), որի վարձակալությունն իր մեջ ներառում է նաև Cinando հարթակի մեկ տարվա անդամակցություն: Տաղավարը կազմված է երկու պատերից՝ համապատասխան ձևավորմամբ: Վարձակալվելու է տաղավարի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և կահույք: Տաղավարում հատուկ դիզայնի միջոցով կներկայացվեն հայ կինոյի 100-ամյա հոբելյանը և պետական աջակցություն ստացած 2022-2023թթ. ֆիլմերը՝ մեկ վայրում ներկայացնելով հայ կինոյի անցյալն ու ներկան: Առաջին հերթին տաղավարը կհանդիսանա որպես հայկական կինոոլորտի ներկայացչություն, ինչպես նաև հայ անկախ պրոդյուսերների գործունեության համար այն կգործի որպես գործնական հարթակ, որը հնարավորություն կտա հայկական տաղավարում կազմակերպել հանդիպումներ և նախագծերի շնորհանդեսներ՝ համարտադրողներ գտնելու նպատակով: • Marche du film կինոշուկայում կիրականցվի երկու շուկայական ցուցադրություն՝ մայիսի 20 ին և 21-ին: Մայիսի 20 -ին Palais C 43 տեղանոց դահլիճում հատվածաբար կցուցադրվեն պետական ֆինանսական աջակցություն ստացած վավերագրական ֆիլմերը (2022-2023թթ.): Մայիսի 21-ին տեղի կունենա «Ավրորայի լուսաբացը» ֆիլմի ցուցադրությունը: Նշենք, որ «Ավրորայի լուսաբացը» ֆիլմը Կինոշուկայում ունենալու է երկու ցուցադրություն: Ըստ լիտվական կողմի հետ պայմանավորվածության՝ կողմերից յուրաքանչյուրը կիրականացնի ֆիլմի մեկական շուկայական ցուցադրություն: Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից որպես ցուցադրության օր ամրագրվել է մայիսի 21-ը : Ֆիլմը կցուցադրվի 63 տեղանոց Lerins 2 կինոդահլիճում: Ցուցադրություններին հրավիրված են լինելու վաճառքի գործակալներ, դիստրիբյուտորներ, փառատոների ներկայացուցիչներ, գործընկերներ : • Որպես կինոշուկայում ընդունված ավանդույթ՝ հայկական տաղավարում մայիսի 21-ին ժամը 14:00-ից 16:00-ը պլանավորում է կազմակերպել հոբելյանական հյուրասիրություն՝ Happy Hour, որը 2023թ. նվիրված կլինի հայ կինոյի հարյուրամյակին և կանցկացվի ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիկին Հասմիկ Տոլմաջյանի մասնակցությամբ: Happy Hour -ի ժամանակ «Ավրորայի լուսաբացը» ֆիլմի լիտվական համարտադրողը հայկական կողմին կհանձնի Ասիա-խաղաղօվկիանոսյան մրցանակաբաշխության ժամանակ ֆիլմի շահած՝ «լավագույն անիմացիոն ֆիլմ» մրցանակը, ինչից հետո տեղի կունենա նաև Ավրորայի լուսաբացը ֆիլմի շուկայական ցուցադրությունը՝ դեսպանի մասնակցությամբ: Հայկական Happy Hour-ին կհրավիրվեն տարբեր երկրների կինոկենտրոնների տնօրեններ, կինոֆոնդերի ներկայացուցիչներ, հին և նոր գործընկերներ, պրոդյուսերներ, դիստրիբյուտորներ և ոլորտի այլ ներկայացուցիչներ: • Կտպագրվի 2022-2023թթ. հայկական կինոինդուստրիան ներկայացնող ամենամյա կատալոգ,որը հասանելի կլինի նաև թվային, ինտերակտիվ ձևաչափով և կունենան QR կոդ:

		• Նախատեսված է «Բարև, ես եմ» ֆիլմի հուշագրքի տպագրություն: • Նախատեսված է A2 չափսի «Բարև, ես եմ» ֆիլմի պաստառների տպագրություն ՝ որպես հուշանվեր: • Նախատեսված է «Հայ կինո 100» մակագրությամբ կտորե տոպրակների պատրաստում՝ հուշանվերների համար: Հաշվի առնելով, որ հեղինակավոր կինոկազմակերպությունները բաց չեն թողնում Կաննի փառատոնը և Marche du Film կինոշուկան, Հայաստանի ազգային կինոկենտրոնը նախատեսել է հանդիպումներ հետևյալ նպատակներով՝ • Մարտին Սկորսեզեի «Կինոհիմնադրամի» (Film Foundation) ներկայացուցիչ Սեսիլիա Սենսիարելիի հետ քննարկել Ս. Փարաջանովի «Նռան Գույնը» ֆիլմի վերականգնված տարբերակի նոր՝ 35 մմ պատճենի տպագրության հնարավորությունը, ինչպես նաև հայկական այլ դասական ֆիլմերի վերականգնման հնարավորությունը: Քննարկվելու է նաև Բոլոնիայի արխիվային կինոփառատոնում Հայ կինոյի 100-ամյակին նվիրված հայկական դասական ֆիլմերի ցուցադրության /4-5/ և ընտրված ֆիլմերի բնօրինակ պոստերների ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը: • Մոնտենեգրոյի կինոկենտրոնի հետ Կաննի կինոշուկայի շրջանակներում նախատեսվում է ստորագրել համագործակցության պայմանագիր՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի և Մոնտենեգրոյի կինոկենտրոնի միջև: Ելնելով ս/թ փետրվար ամսին Բեռլինի Եվրոպական կինոշուկայում Մոնտենեգրոյի Կինոկենտրոնի տնօրեն Ալեքսանդրա Բաժովիչի հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ Կաննի կինոշուկայում պետք է քննարկվի Մոնտենեգրոյի Հերցեգ Նովի կինոփառատոնի շրջանակներում երկօրյա հայկական ծրագրի իրականացման մանրամասները (2023թ., օգոստոս): Նախատեսվում է, որ ծրագիրը կներառի հայկական ֆիլմերի ցուցադրություն, կոնֆերանս, պանելային քննարկում և աշխատարան (workshop), որին կհրավիրվեն հայկական կողմի ներկայացուցիչներ: • Կաննի միջազգային կինոփառատոնի «Կանն կլասիկս» բաժնի ղեկավար Գերալդ Դյուշասուի հետ քննարկել Լեոնի միջազգային կինոփառատոնի շրջանակներում որոշ հայկական վերականգնված դասական ֆիլմերի ցուցադրությունների հնարավորությունը: • Բրյուսելի թագավորական կինոարխիվի հետ(Royal Belgian Film Archive) քննարկել 2023թ. -ին հայկական դասական ֆիլմերի ցուցադրության հնարավորությունը: • Վենետիկի միջազգային կինոփառատոնի «Վենիս Կլասիքս» բաժնի ղեկավար Ֆեդերիկո Ջիրոնիի հետ քննարկել Վենետիկի միջազգային կինոփառատոնի դասականների բաժնում հայկական ֆիլմ ներկայացնելու մանրամասները: • Վրաստանի ազգային կինոկենտրոնի ներկայացուցիչների հետ քննարկել Ս. Փարաջանովի 2024թ. հարյուրամյակին ընդառաջ համատեղ միջոցառումների կազմակերպման առաջարկների մանրամասները (Պորտուգալիայի և Ավստրիայի սինեմաթեկների

		հետ համատեղ), և Ս. Փարաջանովի ֆիլմերի պատճենները ձեռք բերելու հնարավորությունը՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի հավաքածուում պահպանելու նպատակով: • FOCAL կինոյի և աուդիովիզուալ մեդիաոլորտի պրոֆեսիոնալ թրեյնինգների հիմնադրամի MEDICI թրեյինգների ղեկավար Տամարա Տատիշվիլիի հետ՝ Քննարկել 2024թ.-ին MEDICI եռօրյա թրեյնինգներին ու սեմինարներին Հայաստանի մասնակցության մանրամասները, ինչպես նաև թրեյնինգները Հայաստանում անցկացնելու հնարավորությունը: • Ուկրաինայի Դովժենկո կինոստուդիայի ներկայացուցիչների հետ քննարկել Ս. Փարաջանովի հարուրամյակին ընդառաջ (2024թ.) համատեղ միջոցառումների կազմակերպման առաջարկների մանրամասները, որը նախատեսվում է իրականացնել Պորտուգալիայի, Ավստրիայի սինեմաթեկների և Վրաստանի կինոկենտրոնի հետ համատեղ: Քննարկվելու է նաև Ս. Փարաջանովի ֆիլմերի պատճենները ձեռք բերելու հնարավորությունը՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի հավաքածուի մեջ պահպանելու նպատակով: • Պորտուգալիայի կինոկոմիսիա /Portuguese film comission/ ներկայացուցիչների հետ՝ քննարկել համագործակցության հեռանկարները: • Իսրայելի կինոֆոնդի (Israel Cinema Project – Rabinovich Foundation) ներկայացուցիչների հետ հանդիպում՝ Իսրայելում հայկական ֆիլմերի ցուցադրության և համագործակցության այլ եզրեր գտնելու նպատակով: • Ֆայնդրզ Քիփրզ Ռեքորդզ ընկերության համահիմնադիր Դու Շիբթոնի հետ քննարկել Ս. Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի համար սաունդթրեքի թողարկման (վինիլային դիսկերով) և օնլայն հարթակներում սաունդթրեքի տարածման պայմանագրի մանրամասները: • Եվրիմաժի հետ (Eurimages)՝ Քննարկել Եվրիմաժի նախագահ Քեթրին Թրոթմանի, Եվրիմաժի գործադիր տնօրենի և գործադիր տնօրենի տեղակալի 2023թ. աշնանը՝ Հայ կինոյի 100 ամյակի շրջանակներում Երևան այցելելու մանրամասները: • Ֆրանսիական MK2 կազմակերպության հետ քննարկել MK2-ի կողմից հայկական դասական ֆիլմերի վերականգնման հնարավորությունը, ինչպես նաև արդեն վերականգնված հայկական դասական ֆիլմերի դիստրիբյուցիան: • Coproduction Office արտադրական և վաճառքներ իրականացնող կազմակերպության պրոդյուսեր Ֆիլիպ Բոբերի հետ շարունակել քննարկումները Արտավազդ Փելեշյանի 10 ֆիլմերի վերականգնման հարցերով: • Ֆրանսիայի Կինոկենտրոնի (CNC) հետ քննարկել միասնական կրթական և փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու մանրամասները՝ հիմք ընդունելով 2012թ.-ին կնքված պայմանագրի դրույթները: • Եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիայի

		ներկայացուցիչներ Սյուզան Նիկոլտչևի և Պատրիզիա Սիմոնեի հետ քննարկել Հայաստանի կողմից աուդիովիզուալ ոլորտի մասին ներկայացվող տվյալներն առավել ամբողջական դարձնելու մեխանիզմները, տվյալների հավաքագրման ընթացքում հաճախ առաջացող խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիներն ու Օբսերվատորիայի փորձառությունն այդ հարցում: *Հ.Գ. Ցանկանում ենք նշել, որ նշված կազմակերպությունների հետ Կինոկենտրոնի համագործակցությունը շարունակական բնույթ է կրում:*
3.2	Նպատակ	Շարունակել Հայ կինոյի 100-ամյակին նվիրված միջազգային միջոցառումները աշխարհի ամենաճանաչված և ամենահեղինակավոր Կաննի միջազգային կինոփառատոնում և **Marche du Film** կինոշուկայում: Միջազգային ասպարեզ բերել ժամանակակից հայկական ֆիլմերն ու նախագծերը, հայկական կինոժառանգությունը և ամրապնդել այն կապերը, որոնք կնպաստեն հայ կինոմշակույթի տարածմանը և արժևորմանը: **Marche du Film**-ում հայկական տաղավարը դարձնել ճանաչելի **մշտական հանդիպման վայր** այն բոլոր կինոգործիչների համար, որոնք հայ կինոարդյունաբերության նկատմամբ հետաքրքրություն և համագործակցելու ցանկություն են դրսևորում: Հայ անկախ պրոդյուսերների համար ստեղծել հնարավորություն հանդիպումներ կազմակերպելու, նախագծերի քննարկումներ իրականացնելու կինոարտադրության ոլորտի գործընկերների հետ համարտադրության լրացուցիչ ֆինանսավորման և վաճառքի հնարավորություններ ձեռք բերելու նպատակով:
3.3	Անցկացման ժամկետ	2023թ., մայիսի 16-27-ը
3.4	Անցկացման վայր	Կան, Ֆրանսիա
3.5	Ակնկալվող արդյունքներ	Կաննի կինոփառատոնին և կինոշուկային Հայաստանի ներկայությունը կնպաստի հայկական կինոարվեստի միջազգային դիրքավորմանը, հայ-եվրոպական և այլ երկրների կինոարտադրողների միջև կապերի ստեղծմանը, զարգացմանը և ամրապնդմանը՝ խթանելով ոլորտի զարգացումը և միջազգային ճանաչելիությունը: Ավելի կզարգանան և կամրապնդվեն Կինոկենտրոնի միջազգային կապերը և գործունեությունը, ինչի արդյունքում կխթանվեն հայ կինոժառանգության և ժամանակակից ֆիլմերի տարածումն ու ճանաչելիությունն աշխարհում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Կաննի միջազգային կինոփառատոնին կից Marche du Film կինոշուկայում նախատեսվում է՝ Հանդիպումներ՝ 10-16 Հայաստանյան ներկայացուցիչներ՝ 6 (ակնկալվում են նաև հայ կինոարտադրողներ, որոնց թիվը կներկայացվի հաշվետվությամբ) Թվային կատալոգ QR կոդով Marche du Film կինոշուկայում 2 սեանս ցուցադրություն՝ «Ավրորայի

		լուսաբացը» ֆիլմի և հայկական արտադրության 6 վավերագրական ֆիլմերի հատվածների ցուցադրություն Happy Hour հյուրերի քանակ՝ 70-100

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝
Ա. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«10» «05» 2023 թ.
N ՄՇԴ-237 2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Կաննի միջազգային կինոփառատոնին և կինոշուկային մասնակցության

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1	**Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)*, այդ թվում՝**				**357,0**
1.1	թարգմանիչ-խմբագիր *(անգլերեն, «Բարև ես եմ» ֆիլմի գրքույկի)*	մարդ	1	127 000	127,0
1.2	«Բարև ես եմ» ֆիլմի գրքույկի դիզայն	մարդ	1	230 000	230,0
2.	**Ճանապարհածախս, այդ թվում՝**				**1 606,5**
2.1	ավիատոմս՝ Երևան-Նից-Երևան (միջին գին)	հատ	5	300 000	1 500,0
2.2	տոմս (գնացք, ավտոբուս)՝ Նից-Կանն-Նից (միջին գին)	հատ	5	21 300	106,5
3.	**Կեցության ծախսեր, այդ թվում՝**				**3 279,8**
3.1	օրապահիկ՝ (2 մարդ x 8 օր), (113 եվրո x 426 դրամ)	մարդ/օր	16	48 138	770,2
3.2	օրապահիկ՝ (2 մարդ x 7 օր), (113 եվրո x 426 դրամ)	մարդ/օր	14	48 138	673,9
3.3	օրապահիկ՝ (1 մարդ x 4 օր), (113 եվրո x 426 դրամ)	մարդ/օր	4	48 138	192,6
3.4	գիշերավարձ (2 մարդ x 7 օր), (133 եվրո x 426 դրամ)	մարդ/օր	14	56 658	793,2
3.5	գիշերավարձ (2 մարդ x 6 օր), (133 եվրո x 426դրամ)	մարդ/օր	12	56 658	679,9
3.6	գիշերավարձ (1 մարդ x 3 օր), (133 եվրո x 426դրամ)	մարդ/օր	3	56 658	170,0
4.	**Վարձակալական ծախսեր, այդ թվում՝**				**3 178,3**
4.1	դահլիճ՝ 779,2 եվրո x 426.2 դրամ =332126 դրամ	սեանս	2	332 126	664,3
4.2	տաղավար (9 ք. մ.) 4458 եվրո x 426.24 դրամ = 1900177 դրամ	հատ	1	1 900 177	1 900,2
4.3	հեռուստացույց՝ 550 եվրո x 425.4 դրամ = 233970 դրամ	հատ	1	233 970	234,0
4.4	հեռուստացույցի տակդիր՝ 200 եվրո x 425.4 դրամ = 85080 դրամ	հատ	1	85 080	85,1
4.5	աթոռ՝ 47 եվրո x 425.4 դրամ = 19994 դրամ	հատ	2	19 994	40,0
4.6	սեղան՝ 88 եվրո x 425.4 դրամ = 37435 դրամ	հատ	1	37 435	37,4
4.7	բազկաթոռ՝ 61 եվրո x 425.4 դրամ = 25949 դրամ	հատ	2	25 949	51,9
4.8	լույս/լամպ՝ 71 եվրո x 425.4 դրամ = 30203 դրամ	հատ	5	30 203	151,0
4.9	տեխնիկայի ապահովագրություն	եվրո	34	425	14,5
5.	**Տպագրական ծառայություններ, այդ թվում՝**				**3 123,6**
5.1	կատալոգ *(82 էջ)*	հատ	100	4 338	433,8
5.2	բուկլետ-ծրագիր (A3 ֆորմատ)	հատ	50	1 320	66,0
5.3	հրավիրատոմս	հատ	100	128	12,8
5.4	«Բարև ես եմ» ֆիլմի գրքույկ *(21,5սմ x 24 սմ,32 էջ)*	հատ	100	3 870	387,0
5.5	«Բարև ես եմ» ֆիլմի հուշանվեր-պաստառ (A2 ֆորմատ)	հատ	100	800	80,0
5.6	տաղավարի բաների տպագրություն Կաննում՝ 5021.78 եվրո x 426.94 դրամ = 2143998 դրամ	հատ	1	2 143 998	2 144,0
6.	**Այլ կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝**				**580,0**
6.1	տաղավարի պատերի, բաների դիզայն	հատ	1	230 000	230,0
6.2	պայուսակ «Հայ կինոյի 100-ամյակի» լոգոյով՝ 100 հատ x 3500 դրամ = 350000 դրամ	հատ	1	350 000	350,0

7.	**Այլ կազմակերպչական ծախսեր, այդ թվում՝**				**938,0**
7.1	այցեքարտ՝ 459 եվրո x 427 դրամ = 195993 դրամ	հատ	3	195 993	588,0
7.2	«Բարև ես եմ» ֆիլմի հուշանվեր-պաստառի պատյան	հատ	100	3 500	350,0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**13 063,1**
	ԱԱՀ**				**2 612,6**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**15 675,8**
	*** Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**				
	*****ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե***				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732

գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 3ա

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար
Շ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«10» « 05» 2023 թ.
N ՄՇԴ-237-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
« 10 » «05» 2023 թ.
N ՄՇԴ-237-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան
« » « » 2023 թ.

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում
_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)
բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝
_____